



Խորհրդարանի դերը քաղաքական և ոլորտային քաղաքականության ճգնաժամերի կառավարման մեջ

Հեղինակ՝ Ալադե Ղորբանի

Երևան, 2018

Ներածություն

Ժողովրդավարության կարևորագույն սյուներից մեկն անկախ և արդյունավետ կառույցներն են: Ինստիտուտներն Էական դեր են կատարում երկրի տնտեսության զարգացման, հետևաբար նաև հասարակության բարեկեցության ապահովման գործում: Խորհրդարանն այդ կառույցներից է. այն առանցքային դեր ունի երկրում ժողովրդավարության աճի ապահովման և հասարակության մեջ քաղաքական հավասարություն երաշխավորելու գործում:

Հաշվի առնելով ՀՀ-ի՝ կառավարման խորհրդարանական համակարգին անցնելը, թավշյա հեղափոխությունը և հավանական ԱԺ արտահերթ ընտրությունները՝ կփորձենք վերլուծել ԱԺ-ի հնարավոր դերը քաղաքական ճգնաժամի կառավարման և քաղաքականության այլ մարտահրավերների դեմ պայքարի գործում: Խորհրդարանի մանդատը չի սահմանափակվում օրենսդրական մարմնի առաքելությամբ, այն չափազանց կարևոր դեր է խաղում ճգնաժամերի կանխարգելման և կառավարման մեջ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, քաղաքական անցումային փուլում հաշտեցման գործընթացում: Որպես ժողովրդի ներկայացուցիչ մարմին՝ ԱԺ-ն քաղաքացիների քաղաքական շահերը ներկայացնելու համապատասխան միջոցներ և մանդատ ունի: Ի տարբերություն այլ կառավարման մարմինների՝ ԱԺ-ն ավելի սերտ հաղորդակցման մեջ է քաղաքացիների հետ, որը թույլ է տալիս ավելի վաղ կանխատեսել հնարավոր քաղաքական ճգնաժամերը: Այս կանխատեսումները կարող են ՀՀ կառավարությանը հնարավորություն ընձեռնել ճգնաժամը ժամանակին կանխարգելել կամ պատշաճ կերպով կառավարել:

Սույն վերլուծությունն անդրադառնում է տարբեր երկրների օրենսդիր մարմինների նախաձեռնություն-

Սայաթ Նովա 19, Երևան 0001

Հեռ./Ֆաքս՝ (374 10) 582638

Էլ. փոստ՝ mail@ICHD.org

http://www.ICHD.org

ներին և դերերին, որոնք ստանձնել են խորհրդարանները ճգնաժամերի կառավարման նպատակով: Աշխատանքում ներկայացված է, թե ինչու է կարևորվում ԱԺ-ի կազմակերպչական կարողությունների զարգացումը, որը հնարավոր է քաղաքացիների, քաղաքացիական հասարակության և վերլուծական կենտրոնների (think tank) հետ սերտ համագործակցության միջոցով, և որի արդյունքում կարող է բարելավվել նաև ԱԺ-ի ներկայացուցչականությունը և օրենսդրական մանդատի իրագործումը: Ինչ վերաբերում է ճգնաժամերի կառավարմանը, այս վերլուծականը ուսումնասիրում է օրենսդրական մարմնի դերն արդար և արդյունավետ դատական համակարգ ապահովելու մեջ, որը կարող է իրականացվել կառուցվածքային փոփոխությունների, հաշտեցման խորհուրդներ ստեղծելու և քաղաքական անցումային փուլում անցումային արդարադատությունն ապահովող քաղաքականություն մշակելու միջոցով: Կանդիդատականք նաև ԱԺ-ի՝ սահմանադրությամբ տրված իշխանության կիրարկումը և կազմակերպչական կարողությունները բարելավելու կարևորությունը, որը ԱԺ-ին հնարավորություն կտա երկարաժամկետ քաղաքական ռազմավարության մշակման միջոցով իրագործել իր մանդատը և ապահովել ռեսուրսների համապատասխան բաշխումը:

Վերլուծականն ունի հետևյալ կառուցվածքը. նախ՝ կուսումնասիրի խնդրի աղբյուրը, որը քաղաքացիների դժգոհության, ցույցերի և Մերժ Սարգսյանի հրաժարականի պատճառ հանդիսացավ: Այնուհետև կդիտարկվի ԱԺ-ի ավանդական դերը: Հաջորդ բաժինը կանդրադառնա ԱԺ-ի փոփոխվող, նոր դերին, և թե ինչպիսի խնդիրներ կարող են խոչընդոտել ԱԺ-ի՝ ճգնաժամը հաղթահարելու կարողությանը: Այս բաժնում ներառված են նաև ճգնաժամերի ժամանակ կամ քաղաքական անցումային փուլում տարբեր խորհրդարանների կողմից ձեռնարկված հաջողված գործողությունների օրինակներ:

Վերջաբանում ամփոփված են ճգնաժամերի կանխման և կառավարման գործում խորհրդարանի

դերի վերաբերյալ ուսումնասիրության հիմնական եզրակացությունները և ներկայացված է քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ցանկ:

Մեթոդաբանություն

Այս աշխատանքի հիմնական նպատակն է ուսումնասիրել խորհրդարանի դերը քաղաքական ճգնաժամի դեպքում, ավելի ստույգ՝ ուսումնասիրել ոչ բռնի հեղափոխության արդյունքում ոլորտային քաղաքականության փոփոխությունները: Վերլուծականը անդրադառնում է նաև այն թեմային, թե ինչպես է հասարակությունն ընդունում նոր կառավարության օրենսդրական և/կամ ոլորտային քաղաքականության փոփոխությունները: Այս թեմայի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար հեղինակը օգտվել է մի շարք խորհրդարանական ուղեցույցներից, ակադեմիական հոդվածներից և զեկույցներից՝ ճգնաժամային իրավիճակում խորհրդարանի արձագանքի վերաբերյալ հաջողված օրինակներ գտնելու համար: Այս տվյալներն ու փաստերը կիրառվել են ՀՀ ԱԺ-ի համար առաջարկություններ կազմելիս՝ ելնելով ներկայիս քաղաքական իրավիճակից:

Վերլուծություն

Ապագայում ճգնաժամի կանխարգելման և կառավարման մեջ ԱԺ-ի հնարավոր դերի վերաբերյալ վերլուծություններ կատարելու համար նախ պետք է ծանոթանալ ՀՀ-ում վերջին քաղաքական զարգացումներին:

Քաղաքական ճգնաժամի պատճառները

Ըստ Economist Intelligence Unit բրիտանական կազմակերպության՝ 2017 թվականին Հայաստանում ժողովրդավարությունը 10 բալանոց համակարգում գնահատվում էր 4.11, որով այն դասվում էր հիբրիդ կառավարությունների շարքին (կիսա-ավտորիտար) (EIU, 2018): Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխության հիմնական դրդապատճառ հանդիսացավ Սերժ Սարգսյանի երրորդ անգամ անընդմեջ ղեկավար պաշտոնում ընտրվելը: Սարգսյանը երկու անգամ ընտրվել էր երկրի նախագահի և երրորդ անգամ՝ երկրի վարչապետի պաշտոնում: 2008 և 2013 թթ. նախագահական ընտրությունների արդյունքները բազմիցս վիճարկվել են: Չնայած այն փաստին, որ ՀՀ ընտրական համակարգը մի քանի անգամ վերանայվել և ՀՀ-ը հանրաքվեի արդյունքում անցել էր խորհրդարանական կառավարման համակարգի, 2018թ. Սերժ -

Սարգսյանի վարչապետի պաշտոնում ընտրվելը հասարակության մեջ դժգոհության այնպիսի մեծ ալիք բարձրացրեց, որ մարդիկ իրենց բողոքի ծայր բարձրացրեցին արդեն փողոցում:

Բողոքի ակցիաների հիմնական շարժիչ ուժը բազմաշերտ անհավասարությունն է: Բացի քաղաքական մտահոգություններից, հայաստանցիներն իրենց դժգոհությունն էին արտահայտում տնտեսական անհավասարությանից: Թեև տնտեսական կանխատեսումները դրական էին թվում, ամենայն հավանականությամբ երկրում հարստությունը կենտրոնացված կմնար օլիգարխների և քաղաքական գործիչների շրջանակում: Ըստ Համաշխարհային Բանկի “Social Snapshot and Poverty in Armenia in 2012” զեկույցի՝ Հայաստանում միայն 2008-2011 թթ. աղքատությունն աճել էր 26.8 տոկոսով (The World Bank, 2012): Սակայն 2016թ. համեմատությամբ, 2017թ. Հայաստանում կոռուպցիայի նվազում է գրանցվել (Transparency International, 2017): Այս փոքրիկ բարելավումը սակայն պայմանավորված չէր Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ստեղծմամբ, այլ այն փաստով, որ 2016թ. քառօրյա պատերազմի ժամանակ ակնհայտ դարձան բանակում տեղի ունեցող չարաշահումները, երբ զանգվածային լրատվամիջոցները սկսեցին հանրային նվիրատվության կոչ անել բանակի տարրական կարիքները հոգալու համար (Danielyan, H. 2017a): Չինվորների՝ աղքատիկ պայմաններում ծառայելու փաստը հասարակության ուշադրությունը սևեռեց բանակին հատկացվող ռեսուրսների օգտագործմանը: Կառավարության անկարողությունը բավարարելու հանրային ակնկալիքները կոռուպցիայի դեմ պայքարին միտված բարեփոխումներից զգալիորեն խաթարեց պետական ինստիտուտների հանդեպ վստահությունը և նպաստեց հեղափոխության ալիքի բարձրացմանը:

Յետհեղափոխական անցումային շրջանում հասարակությունը սովորաբար ավելի զգայուն է քաղաքական հարցերի նկատմամբ, որը դժվարացնում է օրենսդիր գործունեությունը, քանի որ ոլորտային քաղաքականության արդյունքներն անմիջապես տեսանելի չեն, որն իր հերթին կարող է նպաստել բողոքի ցույցերի և ճգնաժամի շարունակմանը:

Ազգային ժողովի ավանդական դերը

ԱԺ-ն գործում է ինչպես սովորական խորհրդարան. այն կազմված է համամասնական ընտրական համակարգով ընտրված անդամներից և հիմնականում զբաղվում է օրենսդիր գործունեությամբ: ՀՀ սահմանադրության 88-րդ հոդվածի համաձայն՝ ԱԺ-ն ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը, վերահսկողություն իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և ընտրում է վարչապետին (ՀՀ ԱԺ 2018): 2015թ. սահմանադրական փոփոխությունից հետո ԱԺ-ն ընտրում է նաև ՀՀ նախագահին:

ԱԺ նոր դերը

ԱԺ-ն օրենսդրական և վերահսկողական դերերից բացի նաև ունի կարևոր ներկայացուցչական գործառույթ (Stapenhurst, R., & Imbeau, L. 2017):

Ճգնաժամի կանխարգելում

Համացանցի և սոցիալական կայքերի լայն տարածումը քաղաքացիներին հնարավորություն է տալիս իրենց կարծիքն արտահայտել ու արագ արձագանքել, բարձրաձայնել իրենց պահանջները և արագ կազմակերպել հանրահավաքներ ու բողոքի ակցիաներ: Արդյունքում աճում է քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կողմից ԱԺ-ի վրա գործադրվող ճնշումը՝ հավատարիմ մնալու արդյունավետ կառավարման սկզբունքներին և իրականացնելու սոցիալական, տնտեսական բարեփոխումներ: Սոցիալական մեդիան նույն ազդեցությունն ունեցավ Արաբական գարնան և Թավշյա հեղափոխության ժամանակ:

Հաշվի առնելով այս նոր միջավայրի յուրահատկությունները, խորհրդարանի ներկայացուցչական գործառույթի արդյունավետությունը ավելի կարևոր է դառնում բողոքի ակցիաներից և քաղաքական անկայունությունից խուսափելու համար: Այդ իսկ պատճառով արդար խորհրդարանական ընտրությունների անցկացումը չափազանց կարևոր է, հատկապես այս պարագայում, երբ վարչապետը և նախագահը ընտրվում են ԱԺ-ի կողմից: ԱԺ-ի լեգիտիմությունը արժեզրկվում է այն դեպքում, երբ մարդկանց մոտ ընտրությունների նկատմամբ թերահավատություն է առաջանում, հետևաբար նվազում է նաև վարչապետի և նախագահի նկատմամբ վստահությունը: Մինչդեռ այս լեգիտիմությունը քաղաքական ճգնաժամի դեմ պայքարում արդյունավետ դեր ունենալու և որպես ներկայացուցչական մարմին արդյունավետորեն գործելու կարևոր նախապայման է: Հետևաբար, ԱԺ-ն պետք է ընտրական համակարգի մեջ բարեփոխումներ մտցնի՝ դարձնելով այն ավելի ներառական, թափանցիկ և արդար: Կարևոր է նաև կենսունակ կուսակցական համակարգ ունենալը, քանի որ ՀՀ-ն բազմակուսակցական ժողովրդավարություն է: Այդ իսկ պատճառով թերևս անհրաժեշտ է, որպեսզի ԱԺ-ն վերանայի քաղաքական կուսակցությունների ներկայիս գործող կանոնակարգերը և քարոզարշավների ֆինանսավորման կանոնները, որպեսզի օրենսդիր մարմնում քաղաքական բարեվարքության (integrity) ավելի բարձր մակարդակ ապահովվի:

Հաջորդ քայլը քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում ընդլայնելն է, որը հնարավոր է առնվազն երեք եղանակով՝ քաղաքացիների հետ հաղորդակցման սեփական նախաձեռնություններով, լրատվամիջոցների ներգրավվա-

ծույթամբ և առցանց հաղորդակցմամբ (GPAD, 2004): Հետևաբար, որպեսզի ԱԺ պատգամավորները կարողանան առավելագույնս արդյունավետորեն կատարել իրենց ներկայացուցչական դերը, նրանք պետք է ձևավորեն ոլորտային քաղաքականության ձևավորման գործընթացի ժամանակ ընտրողների հետ անմիջական հաղորդակցության կարողություններ: Հասարակության և ԱԺ պատգամավորների շփումը պետք է սահմանափակված չլինի ընտրական ժամանակաշրջանով, այլ պետք է կրի շարունակական բնույթ՝ մասնավորապես իրենց գրասենյակներում քաղաքացիների հետ հանդիպումների համար նախատեսված ժամացանկով և խորհրդարանական նիստերի հանրային դիտումների միջոցով: Այս գործողությունները պետք է սովորական բնույթ կրեն: ԱԺ-ն կարող է նաև մշակել լրատվամիջոցների հետ աշխատելու ռազմավարություն, ըստ որի՝ այն կարող է ավելի արդյունավետ կերպով քաղաքացիներին տեղեկացնել ոլորտային քաղաքականության իր ծրագրերի մասին: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և վերլուծական կենտրոնների հետ սերտ հաղորդակցությունը ԱԺ-ին կօգնի հասկանալ, թե ինչպիսի գործունեությունն է հնարավորություն ընձեռում ավելի արդյունավետ կապ ստեղծել ընտրողների հետ քաղաքականության ծրագրեր մշակելիս: ԱԺ-ի և Հայաստանի հասարակության միջև սերտ հարաբերությունները կամրապնդեն խորհրդարանի լեգիտիմությունը, կմեծացնեն հանրության վստահության աստիճանը և կապահովեն խորհրդարանի կողմից առաջարկվող օրենսդրության համար անհրաժեշտ աջակցությունը:

Կանադա

Կանադայի խորհրդարանը հաշմանդամության նպաստի վերաբերյալ որոշումներ կայացնելիս օգտվում է համացանցից, որպեսզի կապ հաստատի հաշմանդամություն ունեցող քաղաքացիների հետ՝ անձամբ տեղեկանալու նրանց մտահոգությունների մասին և համապատասխան լուծումներ տալու: Այնտեղ գոյություն ունեն նաև պետական բյուջեից ֆինանսավորվող ընտրատարածքային գրասենյակներ, որտեղ պատգամավորները տարբեր ծրագրեր են իրականացնում, ինչպիսիք են, տեղեկատվական հանդիպումները՝ առաջարկվող օրենսդրության վերաբերյալ մարդկանց կարծիքները իմանալու համար (GPAD, 2004):

Մեկ այլ օրինակ է Ազատ առևտրի հյուսիսամերիկյան համաձայնագրի՝ NAFTA-ի հետ կապված ճգնաժամը¹ և ԱՄՆ-ի կողմից Կանադայից ներմուծվող ապրանքների մաքսատուքերի սակագների բարձրացման հավանականության հարցը: Կանադայի կառավարությունը հրավիրել է մի շարք գործարարների և ոլորտի մասնագետների այս հարցերի լուծման շուրջ նրանց առաջարկությունները լսելու և ռազմավարություն մշակելու համար: Քաղաքացիական հասար-

¹ Ազատ առևտրի հյուսիսամերիկյան համաձայնագիր, որը ստորագրվել է ԱՄՆ-ի, Կանադայի և Մեքսիկայի միջև 1994 թվականին:

րակությունը, գիտնականները և բիզնես ներկայացուցիչները այս թեմայով կատարված ուսումնասիրությունների արդյունքներ և հրապարակումներ են ներկայացրել: Այս փաստաթղթերի և կանադացի ընտրողների գաղափարների հիման վրա Կանադայի կառավարությունն սկսել է կառավարել առևտրի շուրջ առաջացած այս բանավեճն այնպես, որ միաժամանակ հասցեագրում է գործարար համայնքի կոնսենսուսային մոտեցումները և պաշտպանում այս քաղաքականության շահառու այլ կողմերի յուրահատուկ շահերը:

ՀՀ ԱԺ կարգավիճակը ճգնաժամի կառավարման գործում

Հայաստանի վերջին քաղաքական ճգնաժամը պայմանավորված էր ընտրությունների կասկածելի արդյունքներով, որը նշանակում է արդյունավետ քաղաքական և պատշաճ ընտրական համակարգերի ստեղծումը, ինչպես նաև ընտրական գործընթացի արդյունավետ վերահսկումը այսուհետ չափազանց կարևոր են Հայաստանում խորհրդարանի նկատմամբ վստահության վերականգնման համար: Ներկայիս օրենսդրական գործընթացում առկա են երկու հիմնական խնդիրներ. նախ՝ ԱԺ-ն գրեթե չի հաղորդակցվում հասարակական կազմակերպությունների, գիտնականների և այլ ոչ-պետական մարմինների հետ իրավական փոփոխություններ կամ քաղաքականության մշակման տարբեր փուլերում պատգամավորներին սահմանափակ ժամանակ է տրվում, ինչը խոչընդոտում է օրենսդրության մշակման համար անհրաժեշտ հետազոտական գործընթացին (OSCE, 2014): Ընտրական օրենսգրքի փոփոխությունները սրա վառ օրինակ են: Դրանք մշակվել և հաստատվել են 2016 թ. մարտին և ընդունվել՝ միայն այդ տարվա հուլիսի 1-ին (Danielyan, H. 2017a): Քաղաքացիների վստահությունը վերականգնելու համար ԱԺ-ն պետք է վերանայի ներկայիս ընտրական համակարգը և քաղաքական կուսակցությունների կանոնակարգերը: Այս փոփոխությունների համար պետք է բավարար ժամանակ տրամադրվի և բոլոր շահագրգիռ կողմերը պետք է ներգրավված լինեն գործընթացի մեջ: Ըստ այս մոտեցման՝ ներքին կանոնակարգերի ձևավորման գործընթացներ են անհրաժեշտ հենց ԱԺ-ում և -կառավարությունում: Մինչ այժմ ԱԺ-ի քայլերը այս ուղղությամբ սահմանափակվում էին բաց խորհրդարանական լսումներ կազմակերպելով, մինչդեռ այն պետք է մշակի ռազմավարություն բոլոր շահագրգիռ կողմերին օրենսդրության մշակման բոլոր փուլերում ներգրավելու համար, օրինակ՝ օրենսդրության մշակման նպատակով խորհրդատվական խմբի հանդիպումներ կազմակերպելու միջոցով:

Հայաստանում պատգամավորների հետ ընտրական շրջանից դուրս հաղորդակցվելը ընդունված պրակտիկա չէ: Գրասենյակային ժամեր գոյություն ունեն, բայց իրականում շատ քչերն են պատրաստ հանդիպել ընտրողներին: Հասարակության վստահություն-

ըն պատգամավորների նկատմամբ կմեծանա, երբ հաղորդակցության այս եղանակը կիրառվի և քաղաքացիների ընդունելությունը պարբերական բնույթ կրի: Պատգամավորները կարող են կիրառել նաև հաղորդակցման այլ միջոցներ, օրինակ՝ պրեզենտացիաներ և տեղեկատվական հանդիպումներ կազմակերպել այն մարդկանց հետ, ում վրա առաջարկվող օրինագիծն անմիջական ազդեցություն կունենա: Նման հարաբերություններ ստեղծելով կարելի է խուսափել հավանական քաղաքական ճգնաժամից, քանի որ հասարակությունը վստահ կլինի, որ պատգամավորները տեղյակ են իրենց մտահոգություններից և առաջարկվող օրենսդրության հետևանքներից: Ներկայումս ԱԺ կանոնակարգը պարտադրում է, որ պատգամավորները գրասենյակային ժամեր ունենան, սակայն պատգամավորների կողմից կամքի բացակայության և հասարակության սահմանափակ պահանջի պատճառով այս դրույթը գրեթե չի կիրառվում:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ևս կարող են խթանել ընտրողների և պատգամավորների միջև հաղորդակցությունը, սակայն սա ոչ թե հարցի լուծում է, այլ միջոց, հանրության վստահությունը ձեռք բերելու ավելի լայն ռազմավարության մաս (Khachatryan, L. 2018): Հասարակության ոչ բոլոր շերտերին է հասանելի համացանցից օգտվելը, այդ իսկ պատճառով պետք է հաշվի առնվեն նաև ոչ առցանց միջոցները (*bid*): Ընտրողների հետ հաղորդակցության բարելավումը և քաղաքացիների մասնակցությունը քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացներին կհանգեցնի ավելի խորհրդարանի արձագանքման որակի բարելավմանը և կվերականգնի վստահությունն այդ ինստիտուտի նկատմամբ:

Քաղաքական և ոլորտային քաղաքականության ճգնաժամերի կառավարում

Անցումն ավտորիտար կամ կիսավտորիտար քաղաքական համակարգից ժողովրդավարության թերևս նորույթ չէ: Կամբոջան, Իսպանիան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը և այլ երկրներ անցել են այս ճանապարհով: Անցումային այս փուլում ամենակարևոր հարցերից մեկն այն է, թե ինչպես պետք է անդրադառնալ նախկին կառավարության կողմից իշխանության չարաշահման խնդրին: Այս մարտահրավերը հաղթահարելու համար առաջ են քաշվում հաշտեցման և անցումային արդարադատության գաղափարները, որոնց միջոցով փորձ է արվում հաստատել արդարության և խաղաղության մթնոլորտ: Անցումային արդարադատության մեխանիզմները կարող են լինել քրեական, սոցիալական կամ տնտեսական (Freeman, M. 2005): Անցումային արդարադատության կիրառման գործիքակազմը ներառում է միջազգային և/կամ հիբրիդ դատարանները, ճշմարտության բացահայտման մարմինները, փոխհատուցման հրամանագրերը, ինստիտուցիոնալ բարեփոխումները, համապատասխան հուշարձանները և/կամ հիշատակման միջոցառումները (ICTJ, n.d.): Եթե

հաշտեցման գործընթացը հիմնականում ենթադրում է ազատ և արդար ընտրություններ, ապա տնտեսական աճը և այլ պրոակտիվ, իրատեսական միջատությունները ևս կարող են վերականգնել արդարությունը և կառավարելի դարձնել ճգնաժամին հաջորդող իրադարձությունները: Անցումային արդարադատությունը «մի չափ» չի, որը հարմար է բոլորին և այն չի ենթադրում համընդհանուր կերպով կիրառելի ռազմավարություն, որը համապատասխանում է բոլոր քաղաքական փոփոխություններին: Այն տարբերվում է ըստ տարբեր քաղաքական կոնտեքստների և հաշտեցման գործընթացի հաջողությունը պայմանավորված է անցումային արդարադատության հաջող իրականացմամբ: Որպես ներկայացուցչական մարմին, խորհրդարանը հաշվետու է իր քաղաքացիների առջև, առավել ևս՝ ճգնաժամի պարագայում: Այն կարող է առանցքային դերակատարություն ունենալ այս գործընթացում՝ քննարկելով քաղաքացիների առջև ծառայած կարևորագույն խնդիրները, հնարավորություն տալով նրանց լսել տարբեր կարծիքներ, հետևաբար՝ բարձրացնելով ազգի հանդուրժողականությունը հաշտեցման արդարության հայեցակարգի հանդեպ: Միջխորհրդարանական միությունը և ժողովրդավարության և ընտրական գործընթացների աջակցության միջազգային ինստիտուտը (International IDEA) համակարգել են տարբեր դերերը և մեխանիզմները, որոնք այս առումով հասանելի են խորհրդարանին: Դրանք նշված են ստորև (Freeman, M. 2005).

«Ճշմարտության քսցահայտման (truth seeking)» հանձնաժողով

Այս խորհուրդը արտա-արդարադատական մարմին է, որը հետաքննում է անցյալի իրադարձությունները՝ պարզելու մարդու իրավունքների չարաչափումները և դրանց պատճառները: Հանձնաժողովը կազմվում է մեկ տարով և իր գործունեությունն ամփոփում է հետաքննության արդյունքների վերաբերյալ զեկույցով (ICTJ, n.d.):

Խորհրդարանը կարող է հավանություն տալ հանձնաժողովի ստեղծմանը, նշանակել դրա անդամներին, ֆինանսավորել այն և օգտագործել վերջնական զեկույցի արդյունքները՝ նոր օրենսդրական մարմին ստեղծելու համար, ինչը տեղի ունեցավ Գերմանիայում 1992թ. և Հարավաֆրիկյան Հանրապետությունում 1995թ. (Freeman, M. 2005): Խորհրդարանը կարող է նաև հանձնաժողովի արդյունավետությունը և հատկացված միջոցների իրացումը վերահսկելու նպատակով ընդունել հատուկ օրենսդրություն ընդունել: Եթե նման հանձնաժողովի ստեղծումը համարվում է նպատակահարմար, չափազանց կարևոր է նաև դրա անդամների թափանցիկ և անկողմնակալ ընտրությունը:

Հարավաֆրիկյան Հանրապետություն

Ապարտեիդի վերացումից հետո հաշտեցման հանձնաժողովի ստեղծման նպատակով ձևավորվեց պատգամավորներից և ոչ պետական գործիչներից

կազմված ընտրական խորհուրդ: Հանձնաժողովին միանալու նպատակով հանրությանը կոչ արվեց դիմումներ ներկայացնել: Առաջին փուլ անցած դիմորդները հանձնաժողովի անդամների կողմից հրավիրվեցին հանրային հեռուստատեսությամբ անցկացվող հարցազրույցի: Վերջնական ընտրության համար նախագահ Նելսոն Մանդելային հանձնվեց հարցազրույցն անցած դիմորդների անունների ցանկը:

Օրենսդրական բարեփոխումներ արդարադատության ոլորտում

Աժ-ն կարևոր դեր ունի արդարադատության ոլորտում բարեփոխումներ կատարելու գործում: Այս դերը հիմնական երկու բաղադրիչ ունի, որոնցից առաջինը ենթադրում է հեռացնել կոռուպացված և իշխանությունը չարաչափած պաշտոնյաներին վերջիններիս անցյալ գործունեության պաշտոնական ստուգման (vetting) և լուստրացիայի միջոցով: Քաղաքական հակահարվածից և ժողովրդավարության խթանումից խուսափելու համար կատարված քայլերը պետք է հիմնված լինեն միմյան փաստերի վրա: - Թերևս շատ ավելի կարևոր է, որպեսզի անձանց, ովքեր մեղադրվում են կոռուպացիայի մեջ, հնարավորություն տրվի պաշտպանել իրենց իրավունքները արդարացի պայմաններում: Խորհրդարանի երկրորդ հիմնական դերը արդարադատության ոլորտում հակակոռուպցիոն և մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականության ընդունումն է, ինչպես նաև քաղաքացիական վերահսկողական մարմինների, օմբուդսմենների և մարդու իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի ստեղծումը (Ibid): Այս օրենսդրական բարեփոխումները պետք է կարողանան կանխարգելել կոռուպցիան և մարդու իրավունքների խախտումները: Օրենսդրական բարեփոխումները պետք է նաև ուղղված լինեն հասարակության բոլոր շերտերի և հատկապես խոցելի խմբերի՝ կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանությանը: Ինչպես նշվեց նախկինում, քաղաքացիական հասարակության մասնակցությունն այս գործընթացին ապահովում է մոտեցման հաջող իրականացումը: Խորհրդարանն անցումային արդարադատության փուլում պետք է նաև ուշադրություն դարձնի տնտեսական զարգացման և սոցիալական արդարության վրա:

Աժ-ն կարևոր դեր ունի ոչ միայն օրենսդրական բարեփոխումների իրականացման, այլ նաև բարեփոխումների իրականացումը վերահսկելու գործում: Այս բարեփոխումները դատական համակարգին հաշվետու պետք է դարձնեն և ապահովեն առաջադրվածների ընտրությունը՝ ըստ արժանիքների: Բարեփոխումները պետք է նաև ապահովեն անկախ բյուջետային համակարգ, որն իր հերթին կապահովի դատական համակարգի անկողմնակալությունը և թույլ կտա խուսափել հովանավորչականությունից և նեպոտիզմից:

Համաներման գաղափարը նույնպես հաճախ է շոշափվում այս կոնտեքստում: Հանրային ցինիզմից

խուսափելու համար համաներման օրենքը պետք է ընդունվի մեծ զգուշությամբ: Տարբեր երկրներում համաներման օրենք է անցկացվել տարբեր նպատակներով: Գերմանիայում, Լեհաստանում և Սլովակիայում այն կիրառվել է քաղաքական բանտարկյալներին կալանքից ազատելու համար, իսկ Իսպանիան, Ֆրանսիան, Շվեյցարիան և Դանիան այն կիրառել են նախկինում չարաչափումների համար մեղադրվողներին ազատելու համար (Transitional Justice and memory in EU, 2013):

Արդարադատության համակարգի բարեփոխումներ Սլովենիայում

Ի տարբերություն նախկին հարավսլավական մյուս երկրների՝ Սլովենիայի դատական համակարգը համեմատաբար ավելի անկախ է և ունի դեռ Յարավսլավիայի ժամանակներից գործող Դատավորների միություն, որը մեծ դեր է խաղացել հարավսլավական երկրների անկախացման ժամանակ:

Սլովենիայի սահմանադրությունն այնպես էր կառուցված, որ դատական համակարգի գործունեությունն առանձնացվի կառավարության մյուս ճյուղերի գործունեությունից: 1991թ. որպես անկախ մարմին հիմնվեց Դատական խորհուրդը: Խորհրդի 11 անդամները, ովքեր ընտրվում էին դասախոսներից, փաստաբաններից և դատավորներից, առաջադրվում էին Սլովենիայի նախագահի կողմից և ընտրվում Սլովենիայի ԱԺ-ի կողմից՝ առանց վերընտրվելու հնարավորությամբ: Սլովենիայի դատական համակարգի ձևավորման երեք հիմնարար օրենսդրական փաստաթղթերն են Սահմանադրական դատարանի ակտը, Դատական ծառայության ակտը և Դատական ակտը: Ըստ Դատական ակտի՝ 1994 թվականին Դատական խորհրդի իրավասությունները եղել են Սլովենիայի խորհրդարանի և արդարադատության նախարարության վերահսկողության տակ: Այս բարեփոխումների շնորհիվ Դատական խորհուրդը ձեռք բերեց լեգիտիմություն: Ի տարբերություն բազմաթիվ նախկին սովետական երկրների՝ Սլովենիան ի վիճակի եղավ հաջողությամբ հիմնել անկախ դատական համակարգ (Dallara, C. 2014):

ՀՀ խորհրդարանի կարգավիճակը ճգնաժամների կառավարման գործում

Ի տարբերություն Լատինական Ամերիկայի շատ երկրների, Հայաստանում հեղափոխությունը տեղի ունեցավ առանց բռնությունների և զանգվածային ձերբակալությունների, այդ իսկ պատճառով ճշմարտության բացահայտման և հաշտեցման հանձնաժողովների ստեղծումը թերևս նպատակահարմար չի: Այդուհանդերձ, անցյալի իրադարձությունները վերանայելու որևէ համակարգ ստեղծելու կարիք կա, որի շնորհիվ հնարավոր կլինի անդրադառնալ մասնավորապես քաղաքականության և ցույցերի ժամանակ ազատագրվածների խնդիրներին: Հաշտեցման խորհուրդը պետք է ապահովի այնպիսի միջավայր, որտեղ քաղաքական կուսակցությունները և քաղաքացիները կարող են հասնել իրական քաղաքական համա-

ձայնության և հստակ տարբերակում մտցնել քաղաքական անհնազանդության և բռնության միջև: Եման անհրաժեշտության օրինակ է 2017թ. «Սասնա ծռեր» խմբի կողմից կատարված բռնի գործողությունների վերանայումը: Հաշտեցման խորհուրդը կարող է ապահովել հարթակ, որտեղ քաղաքական կուսակցությունները և քաղաքացիական հասարակությունը կարող են քննարկել, թե արդյոք բռնի գործողությունը արդարացված է իր քաղաքական նպատակներից ելնելով, թե ցանկացած բռնի գործողություն արժանի է դատապարտման՝ անկախ հանգամանքներից:

Հայաստանում դատական համակարգը անկախ չէ և երկրի ամենաքիչ վստահություն վայելող մարմինն է (CRRC, 2017): 2016թ. բարեփոխումներն անցկացվեցին փակ դռների հետևում և հանրությունը պատշաճ կերպով չտեղեկացվեց դրանց մասին: Ավելին, այդ փոփոխությունները չանդրադարձան երկարատև ու ձգձգված դատական գործընթացների խնդրին (Danielyan, H. 2017a): Չնայած այն փաստին, որ ՀՀ-ում իրականացվեցին մի շարք բարեփոխումներ, դրանց թափանցիկությունը և քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը դեռևս պատշաճ մակարդակի վրա չեն, որը հակասում է աշխարհում տեղի ունեցած ընտրական փոփոխություններին:

Հայաստանում արդեն ստեղծվել և կայացել են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, սակայն Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը չի ընկալվում որպես անաչառ և արդյունավետ կառույց: Եթե ԱԺ-ն ցանկանում է լուծել վստահության բացակայության խնդիրը, կան մի շարք հնարավոր լուծումներ: Կարելի է իրականացնել ներքին բարեփոխումներ՝ հատուկ շեշտը դնելով կանոնակարգերի մշակման և ընթացակարգերի բարեփոխման վրա: Որպես իր նկատմամբ վստահությունը վերականգնելու առաջին քայլ ԱԺ-ն կարող է ապահովել օրենսդրության և դրա հետ կապված ընթացակարգերի թափանցիկությունը և միևնույն ժամանակ վերապատրաստել և խորհրդատվություն տրամադրել պատգամավորներին արդյունավետ կառավարման վերաբերյալ (GRECO & CoE, 2015): Այնուհետև ուշադրությունը պետք է կենտրոնացնել ԱԺ-ի և դատական համակարգի անկախության և արդյունավետության ապահովման վրա: ԱԺ-ն կարող է նաև քայլեր ձեռնարկել բյուջետային միջոցների արդյունավետ ծախսման և քաղաքականության իրականացման հանդեպ վերահսկողություն սահմանելու ուղղությամբ: Հաշվի առնելով կոռուպցիայի և կաշառակերության գիտակցված հետևանքները՝ բարեփոխումները պետք է վերացնեն կոռուպցիոն գործունեության խթանները պետական պաշտոնյաների շրջանում: Կառույցների ներքին ընթացակարգերը պետք է սահմանվեն այնպես, որ հայեցողական որոշումներ կայացնելու պրակտիկան սահմանափակվի և ավելանա թափանցիկությունը և հաշվետվողականությունը (Klitgaard, R. 1998): Այնուհետև, ինստիտուտները, ինչպիսիք են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, պետք է լինեն անկախ և օժտված այլ կա-

ռուլյոներին վերահսկելու լիազորությամբ: Քանի որ տնտեսական անհավասարությունը Հայաստանում շատ մեծ է, կոռուպցիան առավել տարածված է քաղաքականության մեջ և տնտեսության վերին շերտերում, որտեղ քաղաքական գործիչները կարող են իրենց քաղաքական և տնտեսական ազդեցությունը կիրառել սոցիալ-տնտեսական մենաշնորհի ստեղծելու համար: Բարեփոխումները պետք է նաև փորձեն առանձնացնել պետական և մասնավոր սեկտորների ազդեցությունները, որպեսզի կարողանան նվազագույնի հասցնել իշխանության կուտակումը:

Խորհրդարանական մանդատի իրականացման խոչընդոտները


Այստեղ բազմիցս նշվեց ԱԺ-ի դերը ճգնաժամերի կանխարգելման և կառավարման գործում: Այնուամենայնիվ կարևոր է նաև վերլուծել այն չափանիշները, որոնք թույլ կտան ԱԺ-ին կատարել իր առաքելությունն ու պարտականությունները: ԱԺ-ն պետք է ունենա սահմանադրությամբ ամրագրված լիազորություններ և ինստիտուցիոնալ կարողություններ, որպեսզի կարողանա կատարել իր առջև դրված պարտականությունները: ԱԺ-ն պետք է նաև քաջալերի ակտիվ և իրազեկ քաղաքացիների ներգրավվածությունը հասարակական գործընթացներին:

Սահմանադրությամբ ամրագրված իշխանություն

Որևէ օրենսդրության կիրարկում անօգուտ կլինի, եթե այն արդյունավետ կերպով չի իրականացվում կամ չի վերահսկվում ԱԺ-ի կողմից: Այդպիսի օրինակ է ՀՀ ԱԺ-ի սահմանափակ բյուջետային վերահսկողությունը թե՛ բյուջեի կազմման, թե՛ վերահսկման պարագայում (Danielyan, H. 2017b): ԱԺ-ն կարող է միայն ընդունել կամ մերժել բյուջեն, իսկ պատգամավորները կարող են միայն նախագծի շուրջ առաջարկություններ անել, բայց ոչ փոփոխություն: Ըստ 2005թ. սահմանադրական փոփոխությունների՝ երկրի նախագահն իրավունք ունի առաջադրելու ԱԺ Վերահսկիչ պալատի նախագահի թեկնածու (ՀՀ բարձրագույն աուդիտի մարմին), իսկ պալատի աշխատանքը այլևս ԱԺ-ի հաստատման կարիք չունի (*bid*):

Որպեսզի ԱԺ-ն պարզապես կնիք դնողի դերում չլինի, այլ ունենա դե ֆակտո իշխանություն, այն պետք է լինի անկախ և ավելի լուրջ դերակատարություն ունենա քաղաքականության ձևավորման գործում (նկար 1): Անկախ դառնալու համար պատգամավորները պետք է կոալիցիա ստեղծեն, անձնակազմին վերապատրաստեն և կիրառեն իրենց ներկայացուցչականությունից բխող իշխանությունը, որպեսզի ներգրավվեն ավելի լուրջ, բազմաշերտ քաղաքական խնդիրների լուծման մեջ (O'Brien, M. 2010):

Նկար 1: Խորհրդարանական իշխանության մոդելներ



Աղբյուրը՝ O'Brien, M. (2010). *Regional crisis prevention and recovery mechanisms in West Africa: regional and national parliaments employing crisis prevention and conflict management techniques*. UNDP

Ինստիտուցիոնալ կարողություն

Ինստիտուցիոնալ կարողությունների առումով ԱԺ-ն պետք է ունենա բյուջե, որպեսզի արդյունավետ կերպով ռեսուրսների բաշխում իրականացնի և հաղորդակցվի ընտրողների, քաղաքացիների և հասարակության բոլոր շերտերի հետ: Ավելին, ԱԺ-ն պետք է ունենա որակյալ մասնագետներ և ուսումնասիրությունների կենտրոն, որպեսզի կարողանա ապահովել հանձնաժողովների պատշաճ գործունեությունը և կարողանա ներկայացնել փաստերի վրա հիմնված օրենսդրական առաջարկներ: ԱԺ-ից Վերահսկիչ պալատի առանձնացումից հետո ԱԺ-ում ոլորտային քաղաքականության մասնագետների թիվը կտրուկ նվազեց (Danielyan, H. 2017b): ԱԺ-ն չունի համապատասխան խորհրդատվական աջակցություն և անգամ որակյալ մասնագետներ գտնելու դեպքում, դժվարանում է նրանց այդ պաշտոնում պահել, քանի որ աշխատավարձը շատ ցածր է (OSCE, 2014): ԱԺ-ն կարող է ընդունել օրենսդրություն, որի հիման վրա այն ձեռք կբերի անհրաժեշտ բյուջե՝ խորհրդարանին անհրաժեշտ աջակցություն համակարգեր ստեղծելու և վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար, ինչպես նաև ամբողջական օրենսդրական համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար: Բացի այդ, մասնագիտական հմտությունները և օրինագծերի նախապատրաստման նախկին փորձը պետք է դառնան նոր աշխատակիցների ընդունման համար կարևոր պահանջ: Ինչպես նշվեց վերևում, ԱԺ-ն օրենսդրական նախագծերի քննարկումից առաջ պետք է հասարակական կազմակերպություններին և մյուս շահագրգիռ կողմերին հրավիրի հանդես գալու առաջարկություններով, ինչպես նաև հրավիրի մասնագետներին հանրային լուծումների՝ նրանց կարծիքը խնդրի շուրջ իմանալու համար: Այս ինստիտուտները կարող են խորհրդարանին տրամադրել փաստերի ու ապացույցների վրա հիմնված վերլուծություն՝ քաղաքականության մշակման համար (Larsen, G. C. 2018): ԱԺ-ն կարող է շահել նաև վերը նշված շահառուների ներգրավվածությունից օրենսդրության վերահսկո-

դուրսը իրականացնելու գործընթացում, ինչպես նաև քաղաքականության մշակման ընթացքում տեղեկանալով դրա վերաբերյալ նրանց արձագանքներին: ԱԺ-ն կարող է նաև փորձել քաղաքացիական հասարակությունից ստանալ գնահատական Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատանքի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է հանրային ռեսուրսների օգտագործմանը, կառավարությունը 2000թ. սկսեց ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգը: ՀՀ Արդարադատության նախարարությունը Եվրամիության հետ համատեղ 2016թ. ստեղծեց *e-draft.am* կայքը, որը օրինագծերի հրապարակման միասնական կայք է, որտեղ էլ քաղաքացիները կարող են իրենց գնահատականը տալ նշված ժամկետում (ամենաքիչը 15 օր): Այս միջոցի իրական արդյունավետությունը դեռևս գնահատված չէ, սակայն ԱԺ-ն կարող է օգտվել դրանից նմանատիպ նոր հարթակ ստեղծելու փոխարեն:

Ուզանդա

Ուզանդայի կառավարությունը 1992թ. ընդունեց «Կրթության մասին» փաստաթուղթ համընդհանուր տարրական կրթություն ապահովելու վերաբերյալ և որպեսզի գործընթացն արագացվի, այն ապակենտրոնացրեց ֆինանսավորումը՝ հասցնելով այն տեղական մակարդակի: Կառավարությունը նաև ներգրավեց քաղաքացիական հասարակությանը՝ գործընթացը վերահսկելու և գնահատելու համար, որպեսզի կանխի ֆինանսական միջոցների յուրացումը: Քաղաքացիական հասարակությունը սերտորեն համագործակցում էր տեղական համայնքների հետ՝ հնարավորություն տալով տեղացիներին ներգրավվել գործընթացի մեջ և վերահսկել նախագիծը (Claasen, M. 2002):

Քաղաքացիական պատասխանատվություն

Խորհրդային միության ժառանգության արդյունքում հետխորհրդային հասարակությունները խուսափում են քաղաքական անորոշություններից: Իսկ Հայաստանում իշխանության հեռավորության աստիճանը բավականին բարձր է, այսինքն ինստիտուտների և կազմակերպությունների այն անդամները, ովքեր ավելի քիչ իշխանություն ունեն, ընդունում են, որ ինդիքների լուծման համար պետք է դիմել ավելի մեծ իշխանություն ունեցողներին (high power distance) (Hofstede Insight, 2018): Հենց այս ընկալումներն են ձևավորել քաղաքացիական գործընթացներին հանրության ներգրավվածության մշակույթը: Նախկին ԽՍՀՄ-ում կառավարման վերից վար մոտեցումը և -ցածր հաշվետվողականությունը մարդկանց հետ էր պահում նախաձեռնություններից, փոխարենը, քաղաքացիների մեծամասնությունն ակնկալում է, որ իշխանությունները պետք է թելադրեն իրենց անելիքները: Այդ իսկ պատճառով, անգամ ժողովրդավարական կառավարման ժամանակ, երբ քաղաքացիների ներգրավվածության համար համապատասխան պայմաններ գոյություն ունեն, Հայաստանում հաղորդակցու-

յունը քաղաքացիների և կառավարության միջև շատ քիչ է (հատկապես ավելի ավագ սերունդների դեպքում): Հայաստանի անապահով և ռազմականացված լինելը ևս խթանել է անհանդուրժողական քաղաքական մշակույթի ձևավորումը (Giragosian, R. 2013): Նման քաղաքական միջավայրը քաղաքացիներին չի բաջալերում լինել հաշվետվողական և մասնակցություն ունենալ քաղաքական գործընթացներին: Այդուհանդերձ, նախկին ընդդիմադիր առաջնորդ և ներկայիս վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի ունեցած խաղաղ հեղափոխությունը ժամանակակից Հայաստանի ամենաձավալուն բողոքի ակցիաների վկան էր և առայժմ կարողանում է պահպանել օրենքի գերակայության սկզբունքը: Հետևաբար, պետական մարմինների համար հնարավորություն է ստեղծվել կատարել բարեփոխումներ՝ վերականգնելու իրենց լեգիտիմությունը և հասարակության կողմից վստահությունը: Այլապես բոլոր ինստիտուտները կմնան ճգնաժամի մեջ, որը կարող է հանգեցնել հետագա քաղաքական ճգնաժամների: ԱԺ-ն կարող է կազմակերպել քաղաքացիական իրավունքի վերաբերյալ իրազեկման ծրագրեր և ներգրավել ընտրողներին քաղաքական որոշումների կայացման մեջ: Քաղաքացիական հասարակության դերը շատ կարևոր է հանրության մեջ քաղաքական մշակույթի ձևավորման գործում:

Առաջարկություններ

ԱԺ-ն կարող է.

- Վերանայել ընտրական համակարգը՝ ապահովելու քաղաքացիական հասարակության, գիտական, վերլուծական կենտրոնների և ակադեմիայի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը քաղաքական գործընթացներին, այդպիսով ապահովելով սոցիալապես ընդգրկուն, արդար, թափանցիկ ընտրություններ և քաղաքական գործընթացներ.
- Վերանայել քաղաքական կուսակցությունների գործունեության կանոնակարգման շրջանակը՝ ապահովելու հավասարություն, մատչելիություն և բոլոր խմբերի մասնակցությունը.
- Ապահովել ԱԺ-ի և մյուս կառույցների թափանցիկությունը կոռուպցիայից խուսափելու նպատակով.
- Սահմանել ռազմավարություն՝ հանրությանը ներգրավելու օրենսդրության նախապատրաստման, մշակման և կիրարկման տարբեր փուլերում.
- Կիրառել հաղորդակցման տարբեր միջոցներ, ինչպիսին է, օրինակ, *e-draft.am* կայքը.

ուժեղացնելու իր դերը որպես քաղաքացիների ներկայացուցիչ և հաղորդակցվելու կայքում առաջարկություններ և մեկնաբանություններ թողած քաղաքացիների հետ.

- Կիրառել գրասենյակային ժամերը և քաղաքացիներին անձամբ ընդունել նրանց մտահոգություններն ու մեկնաբանությունները լսելու համար.
- Կազմակերպել տեղեկատվական հանդիպումներ և խորհրդարանական նիստեր.
- Օրինագծերը դնել քննարկման թափանցիկությունը բարձրացնելու համար և հանրությանը տեղեկացնել դրա շուրջ առաջացած մտահոգությունների մասին.
- Մշակել ռազմավարություն և խթանել լրատվամիջոցների հետ հաղորդակցությունը.
- Կարգավորել խորհրդարանական գործընթացները, որպեսզի ավելի շատ ժամանակ տրամադրվի օրենսդրական նախագծերի քննարկմանը և կառավարության կողմից առաջարկվող օրենսդրության գնահատմանը.
- Ապահովել պատգամավորներին համապատասխան վերապատրաստմամբ, իրենց՝ որպես ժողովրդի ներկայացուցչի դերն ավելի լավ կատարելու համար.
- Կազմակերպել դասընթացներ պատգամավորների համար՝ հակակոռուպցիոն, մարդու իրավունքների և օրենսդրական հմտությունների վերաբերյալ.
- Ընդունել համապատասխան օրենսդրություն՝ քաղաքական անցումային փուլում հաշտեցման հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ.
- Յաշտեցման հանձնաժողովի անդամների ընտրությունն իրականացնել անկողմնապահորեն և թափանցիկ կերպով.
- Յաստատել բյուջե հաշտեցման հանձնաժողովի համար և վերահսկել այն.
- Ստանալ հանրության համաձայնությունը համաներման օրենքի վերաբերյալ.
- Բարեփոխել դատական համակարգը, որպիսզի այն լինի վստահելի և անկողմնապահ: Ապահովել անկախ բյուջետային համակարգ: Աշխատանքի ընդունումը կատարել ըստ արժանիքների.
- Ստեղծել կոռուպցիայի կանխարգելման և մարդու իրավունքների պաշտպանության ապահովման մեխանիզմներ.
- Բարեփոխել օրենսդրությունը, որպեսզի այն կարողանա վերահսկել գործադիր մարմինի

աշխատանքը և կատարել փոփոխություններ անհրաժեշտության դեպքում.

- Վերապատրաստել ԱԺ աշխատակազմին՝ տրամադրելով օրենսդրության մշակման համար անհրաժեշտ հմտություններ.
- Ներգրավել քաղաքացիական հասարակությանը վերահսկելու օրենսդրության կիրարկման գործընթացին և ստանալ նրանց գնահատականը.
- Գնահատել ընդունված օրենսդրության կիրարկման արդյունքները.
- Վերահսկել բյուջետային ծրագրերը, արդյունքներն ու դրանց արդյունավետությունը՝ հանձնաժողովների ուժեղացման միջոցով.
- Ոլորտային մասնագետներին հրավիրել հանրային լսումներին և ստանալ նրանց կարծիքը.
- Կազմակերպել տարբեր ծրագրեր և ստեղծել մեխանիզմներ՝ նպաստելու քաղաքականության մեջ ընտրողների ակտիվ մասնակցությանը:

Վերջաբան

ԱԺ-ն կարող է շատ կարևոր դեր խաղալ քաղաքական ճգնաժամերի կանխարգելման և կառավարման գործում՝ որպես ներկայացուցչական, օրենսդիր և վերահսկող մարմին: ԱԺ-ն ամրագրում է իր լեգիտիմությունը որպես ժողովրդի ներկայացուցիչ՝ թափանցիկ ընտրական համակարգ ստեղծելով: Այդ լեգիտիմությունն ԱԺ-ին օգնում է կանխարգելել քաղաքական ճգնաժամերը և իր հանդեպ վստահություն ձևավորել՝ նպաստելով հասարակության ներգրավվածությանը քաղաքական գործընթացներին և սոցիալական բոլոր շերտերի մտահոգությունների արտացոլմանը: Քանի որ ԱԺ-ն համակարգում միակ գործող մարմինը չէ, այն պետք է համագործակցի քաղաքացիական հասարակության, ակադեմիայի, հասարակական կազմակերպությունների հետ, որպեսզի ամրապնդի իր լեգիտիմությունը՝ արդյունավետ օրենսդրություն առաջարկելու և վերահսկողական գործառնությունը պատշաճ կերպով կատարելու համար: Անցումային փուլից անմիջապես հետո ԱԺ-ն պետք է ընդունի օրենսդրություն դատական համակարգի, հակակոռուպցիոն խորհրդի և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի արդյունավետ և անաչառ աշխատանքը ապահովելու համար: ԱԺ-ն կարող է նաև հաշտեցման հանձնաժողով ստեղծել՝ հետաքննություն անց կացնելու և նախկին վարչակազմից տուժածների համար արդարությունը վերականգնելու նպատակով:

Այս մանդատն իրականացնելու համար ԱԺ-ն պետք է սահմանադրական բարեփոխումներ կատարի՝ ձեռք բերելով իշխանություն վերահսկողություն կատարելու և կանոնակարգերը փոփոխելու համար: ԱԺ-ն կարող է նաև վերանայել օրենսդրությունը և բյուջե հատկացնել պատգամավորների և ԱԺ աշխատակիցների վերապատրաստման համար: ԱԺ-ն կարող է մշակել քաղաքացիների իրազեկությունը բարձրացնելու մեխանիզմ՝ քաջալերելով նրանց պաշտպանել իրենց իրավունքները և մասնակցել հասարակական գործընթացներին: Սահմանափակ միջոցներ ունեցող երկրների համար գործնական և նորարարական ուղիներ գտնելու նպատակով հետազոտություններ են անհրաժեշտ, հանրային ծառայողների իրավասությունների և քաղաքացիների քաղաքական իրազեկվածությունը բարելավման համար:

Գրականության ցանկ

- Giragosian, R. (2013). Chapter I: Political Transformation: Shadows of The Past, Facts and Anticipations - The Political Dimension: Armenian Perspective. *The South Caucasus 2018 Facts, Trends, Future Scenarios* (p. 20). Konrad-Adenauer-Stiftung. Georgia
- Claasen, M. (2002). Making the Budget Work for Education: Experiences, achievements and lessons from civil society budget work. *Commonwealth Education Fund*. Retrieved from https://www.internationalbudget.org/wp-content/uploads/2011/01/Making_the_Budget_Work_for_Education.pdf
- CRRC (The Caucasus Research Resource Center), 2017. *Caucasus Barometer*. Retrieved from <http://www.caucasusbarometer.org/en/cb2017am/TRUCRTS/>
- Dallara, C. (2014). Chapter 2: Smoother Judicial Reforms in Slovenia and Croatia: Does the
- Legacy of the Past Matter? *Democracy and Judicial Reforms in South-East Europe Between the EU and the Legacies of the Past* (pp. 36-40). Springer International Publishing Danielyan, H. (2017a). The World Bank Development Indicator-Armenia. *Freedom House*. Retrieved from https://freedomhouse.org/sites/default/files/NIT2017_Armenia_0.pdf
- Danielyan, H. (2017b). Chapter 8 Armenian Parliamentary Oversight in Transition? The Evolution of Parliamentary Control Over Public
- Spending in Post-Soviet Armenia. In R. Staphenurst & L. Imbeau (Eds). *Contemporary Developments in Parliamentary Oversight in Francophone Countries* (pp. 155- 167).
- EIU (Economist Intelligent Unit). 2018. Armenia's democracy ranked in the Economist Intelligence Unit (EIU) report. *Lragir.am*. Retrieved from <https://www.lragir.am/en/2018/02/01/37900>
- Freeman, M. (2005). *Handbook for Parliamentarians No 10, Making reconciliation work: Role of Parliaments*. Inter-Parliamentary Union and the International Institute for Democracy and electoral Assistance.
- GPAD (Governance and Public Administration Division). 2004. The Role of Parliament in Promoting Good Governance. *Economic Commission of Africa, United Nation*. Retrieved from <https://www.uneca.org/sites/default/files/PublicationFiles/role-of-parliament-in-promoting-good-governance.pdf>
- GRECO (Groups of States against Corruption) & CoE (Council of Europe), 2015. *Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors - Fourth Evaluation - Armenia*. Greco Eval IV Rep (2015) 1E Hofstede Insight (2018). Country comparison - Russia. Retrieved from <https://www.hofstede-insights.com/country-comparison/russia/>
- ICTJ (International Centre for Transitional Justice). (n.d.). *What does transitional justice look like?* Retrieved from <https://www.ictj.org/about/transitional-justice>
- Khachatryan, L. (2018). Government and Society: The Necessity for Reciprocal Relationship for Development. *American University of Armenia. Political Science & International Affairs*
- Khzrtian, S. S. & Samuelian J. T. (2012). The Armenian culture of negotiation: research approaches. *Yerevan State University*. Retrieved from http://www.ysu.am/files/04S_Khzrtian_T_Samuelian.pdf
- Klitgaard, R. (1998). International Cooperation Against Corruption. *Finance & Development*. Retrieved from <https://pdfs.semanticscholar.org/b6cf/ccb56a32cf9124be07c07b3494b79e841f58.pdf>
- Larsen, G. C. (2018). Outsourcing, research units and communication- How to create a strong
- National Assembly of the Republic of Armenia (2018). *Amendments to the Constitution of the*

- Republic of Armenia*. Retrieved from <http://www.parliament.am/parliament.php?id=constitition&lang=eng#4>
17. O'Brien, M. (2010). Regional crisis prevention and recovery mechanisms in West Africa: regional and national parliaments employing crisis prevention and conflict management techniques. *UNDP*. Retrieved from https://www.agoraparl.org/sites/default/files/regional_crisis_prevention_mechanisms_and_parliamentary_development_in_west_africa.original.pdf
 18. OSCE (Office for Democratic Institution and Human Rights), 2014. *Assessment of the Legislative*
 19. *Process in the Republic of Armenia*. Legis Paper-Nr.: 247/2014 [YA].
 20. Staphurston, R., & Imbeau, L. (2017). *Contemporary Developments in Parliamentary Oversight*
 21. *in Francophone Countries*. Ottawa: Canadian Audit and Accountability Foundation.
 22. Transitional Justice and memory in EU. (2013). *Amnesty Law*. Retrieved from
 23. <http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/>
 24. World Bank. (2018). *Doing Business - Armenia*. Retrieved from <http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia>